«Քաղաքացիական հասարակության ռազմավարությունների քննարկում»
Միջոցառման արդյունքների ամփոփագիր

Օգոստոսի 24-26, 2018

Համառոտագիր

2018թ. օգոստոսի 24-ից 26-ը Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ)՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «ՀԿ Դեպո-Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագրի» շրջանակներում կազմակերպեց **«Դեպի քաղաքացիական հասարակության ռազմավարություններ նոր իրադրության պայմաններում»** թեմայով եռօրյա հավաք՝ քննարկելու Հայաստանի ռազմավարական զարգացման տեսլականն ու առկա մոտեցումները Թավշյա հեղափոխության արդյունքում ստեղծված և նախադեպը չունեցող նոր պատմական պայմաններում: **Միջոցառման նպատակներից էր**՝ քաղաքացիական հասարակության և կառավարության միջև հաղորդակցության և համագործակցության մեխանիզմների հստակեցումը, առաջխաղացումը, բացակայության դեպքում նաև ստեղծումը, նորարարական գաղափարների ձևավորումը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության տեսլականի, դրա իրագործման ռազմավարության ուրվագծումն ու քննարկումը:

Միջոցառման մասնակիցների նախնական ցանկը ընդգրկում էր ավելի քան 400 մասնակից՝ քաղաքացիական հասարակության առաջատար դերակատարներ և մտավորականներ, անկած վերլուծաբաններ, նախարարությունների, կառավարական գերատեսչությունների և մեդիա ոլորտի ներկայացուցիչներ: Հայաստանում Թավշյա հեղափոխության արդյունքում տեղի ունեցած փոփոխությունների և առաջացած հնարավորությունների քննարկմանը առավել արդյունավետ մասնակցելու համար ընտրվեց ընդհանուր առմամբ 120 մասնակից և կիրառվեց ազատ տարածքի մեթոդը: Վերջինս հնարավորություն տվեց մասնակիցներին **առաջին իսկ օրը** ազատ ընտրությամբ ձևավորել մի շարք թեմատիկ խմբեր և ոչ պաշտոնական միջավայրում քննարկել ընտրված թեմային առնչվող դրական ու բացասական հանգամանքները (ասպեկտները): Մասնակիցները բարձրաձայնեցին շուրջ 30-35 խնդիր, որոնց շուրջ ձևավորվեց 12 թեմատիկ խումբ՝

- Արհմիություններ, շահերի պաշտպանություն
- Կրթություն

- Քաղաքացիական հասարակությունը հանուն մարդու իրավունքների. իրավական համակարգ
- Կայուն զարգացում և շրջակա միջավայրի պահպանություն
- Մեդիա
- Տարածքային համաչափ զարգացում
- Ընտրություններ, քաղաքականություններ, ռազմավարություններ. կառավարություն-ՔՀԿ-կուսակցություն կապ և հաղորդակցություն
- Կանայք նոր իրադրության պայմաններում
- Կառավարման ռեֆորմ
- Մշակույթ
- Քաղաքացիական հասարակության զարգացում
- Գլոբալ Հայաստան-արտաքին հարաբերություններ

Թեմատիկ խմբերում բոլոր քննարկումների արդյունքները ներկայացվում և վերլուծվում էին պլենար նիստերի ընթացքում:

Երկրորդ օրը թեմատիկ խմբերում քննարկվեցին առաջին օրը բարձրաձայնած թեմաներին առնչվող առկա խնդիրների լուծման հնարավոր ձևաչափերը և մեխանիզմները, բարձրաձայնվեցին մի շարք առաջարկներ:

Երրորդ օրը ամփոփեց առաջին երկու օրվա ընթացքում կատարված աշխատանքը: Թեմատիկ խմբերից մի մասը կամ ձուլվեց, կամ մասնատվեց, արտահայտիչ դարձան թեմատիկ խմբերի միջև առկա կապերը: Պլենար նիստերի ընթացքում առանձնացվեցին խնդիրների լուծմանն ուղղված կիրառելի և իրատեսական ձևաչափերն ու մեխանիզմները: Երրորդ օրը հատկանշական էր նաև այն հանգամանքով, որ պետական դաշտը ներկայացնող պաշտոնյաներից մի քանիսը (Արթուր Գրիգորյան՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար, Արթուր Վանեցյան՝ ԱԱԾ տնօրեն, Նազենի Ղարիբյան՝ Մշակույթի նախարարի տեղակալ, Սարհատ Պետրոսյան՝Կադաստրի կոմիտեի ղեկավար, և այլոք) կիսվեցին իրենց փորձով, խորքային տեղեկատվություն տվեցին համապատասխան ոլորտի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, թե՛ ՔՀԿ դաշտի ներկայացուցիչները, թե՛ պետական պաշտոնյաները, թե՛ վերլուծաբաններն ու մեդիա ոլորտի ներկայացուցիչները գիտակցեցին, որ երկրում առկա առաջնահերթ կարիքների և խնդիրների հրատապ լուծումը հնարավոր է միմիայն ՔՀԿ-պետական սեկտոր համագործակցության միջոցով և արդյունքում, համատեղ ուժերով երկրում բարեփոխումների գործընթացը սահուն և անխափան իրականացնելով: ՔՀԿ ներկայացուցիչները պատրաստակամություն հայտնեցին միջոցառման ընթացքում քննարկված առաջարկներն ու ձևաչափերը ընդգկել իրենց ռազավարություններրում,

պետական գերատեսչությունների ներկայացուցիչնեչը, իրենց հերթին, գիտակցեցին ՔՀԿ և փորձագիտական ներուժի միջոցով վեր հանած խնդիրների հրատապությունը և դրանց լուծման ընթացքում ՔՀԿ-ների հետ համագործակցության անհրաժեշտությունը։

Բովանդակություն

Ներածություն 5

Խումբ 1. Արիմիություններ, շահերի պաշտպանություն 5

Խումբ 2. Կրթություն 6

Խումբ 3. Քաղաքացիական հասարակությունը հանուն մարդու իրավունքների. իրավական համակարգ 9

Խումբ 4. Կայուն զարգացում և շրջակա միջավայրի պահպանություն 11

Խումբ 5. Մեդիա 12

Խումբ 6. Տարածքային համաչափ զարգացում 15

Խումբ 7. Ընտրություններ, քաղաքականություններ, ռազմավարություններ. Կառավարություն- ՀԿ-կուսակցություն կապը և հաղորդակցությունը 20

Խումբ 8. Կանայք նոր իրադրության պայմաններում 22

Խումբ 9. Կառավարման ռեֆորմներ 24

Խումբ 10. Մշակույթ 26

Խումբ 11. Քաղաքացիական հասարակության զարգացում 27

Խումբ 12. Ցանցապետություն 30

Այլ առաջարկություններ, որոնք ձևավորվեցին պլենար քննարկումներում 34

Ընդհանուր նկատառումներ 36

Ներածություն

Օգոստոսի 24-26–ը քաղաքացիական հասարակության մոտ 50 առաջատար դերակատարներ և մտավորականներ, անկախ վերլուծաբաններ, նախարարությունների, կառավարական գերատեսչությունների և մեդիա ոլորտի մոտ 30 ներկայացուցիչ (ընդհանուրը՝ 120 մասնակից) հավաքվել էին ազատ ստեղծագործ մթնոլորտում՝ քննարկելու պատմական նոր պայմաններում Հայաստանի զարգացման տեսլականի տարբերակները: Պատմական նոր իրավիճակը պայմանավորված է Հայաստանում Թավշյա հեղափոխության արդյունքում տեղի ունեցող փոփոխություններով, որոնց բարեհաջող ընթացքն ապահովելու գործում մեծ դեր ունի նաև քաղաքացիական հասարակությունը: «Դեպի քաղաքացիական հասարակության ռազմավարություններ նոր իրադրության պայմաններում» թեմայով եռօրյա աշխատանքային հանդիպը տեղի ունեցավ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «ՀԿ Դեպո-հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագրի» շրջանակներում:

Միջոցառման նպատակն էր հնարավորություն տալ մասնակիցներին թեմատիկ խմբերում և պլենար նիստերում քննարկել Հայաստանի ռազմավարական զարգացման տեսլականի վերաբերյալ առկա մոտեցումները՝ հաշվի առնելով ստեղծված նոր պատմական պայմանները: Ստորև ներկայացված կետերից ոչ բոլորն են հավակնում ծրագիր դառնալ և միայն երկխոսության արդյունքում առաջացած գաղափարներ են՝ ենթակա հետագա քննարկման:

Խումբ 1. Արհմիություններ, շահերի պաշտպանություն

Արհմիությունների խումբը վերլուծել է Հայաստանում գործող արհմիությունների վիճակը և դրանց նկատմամբ կարիքները, և թե ինչպես է արհմիությունների գործունեությունը կարգավորվում օրենսդրությամբ, վերլուծել է թեմային առնչվող ուժեղ և թույլ կողմերը և ներկայացրել հետևյալ առաջարկությունների փաթեթը.

Իրադրության դրական կողմեր

- Արհմիության ստեղծման համար կա իրավական պարզեցված ընթացակարգ (արհմիությունների մասին օրենքը)
- Օրենսդրական դաշտը տալիս է հավելյալ հնարավորություններ՝ օգտագործելու արհմիությունների գործառույթները
- Ըստ օրենքի, արհմիությունները ֆինանսապես անկախ են

Բացասական կողմեր

- Ֆինանսական հաշվետվությունների բացակայություն
  ա) արհմիությունները չեն ներկայացնում ֆինանսական հաշվետվություն
  բ) արհմիություններից չեն պահանջում ներկայացնել ֆինանսական հաշվետվություն
- Խրթին օրենսդրական դաշտ (աշխատանքային օրենսգիրք, որում աշխատողների իրավունքները լավ պաշտպանված չեն)
- Օրենսդրությամբ առավելությունը տրվում է գործատուին
- Գործատուներից պահանջները քիչ են, աշխատողներից՝ շատ
- Հարաբերությունների ցածր մշակույթ
- Դաշտի մոնոպոլիզացիա (արհմիությունները քիչ են և կառավարվում են մեկ կենտրոնից)
- Մրցակցության բացակայություն

Առաջարկներ

- Ստեղծել ուսանողական այլընտրանքային արհմիություն
- Ստեղծել արհմիության այլընտրաքային տարբերակ
- Վերանայել օրենսդրական դաշտը
- Լուծարել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան (ՀԱՄԿ)
- Ստեղծել աշխատանքային տեսչություն
- Ստեղծել ֆեյսբուքյան էջ և ակտիվ քննարկումներ մեկնարկել
- Կապեր հաստատել առաջատար բիզնես ընկերությունների հետ և համագործակցելով վերջիններիս հետ՝ նպաստել արհմիություններ ստեղծելուն. բիզնեսի մշակույթը, ուղղված աշխատողի շահերի պաշտպանությանը, օրինակ կծառայի հասարակության համար. նպաստել, որ պետությունն սկսի խրախուսել այդ բիզնեսներին
- Ստեղծել (տաքսու, հանրային տրանսպորտի) վարորդների արհմիություն

Խումբ 2. Կրթություն

Իրադրության դրական կողմեր

- Պետական անվճար հանրակրթության առկայություն
- Որակյալ կրթություն ստանալու հասարակական ակնկալիք
- Ոչ ֆորմալ կրթության ոլորտի ձեռքբերումները, ինչպես օրինակ, ՔՀԿ-ների կողմից իրականացվող հսկայական ուսուցողական միջոցառումների քանակը և ձևավորված մեթոդների բազմազանությունը
- Բավականին զարգացած SS մասնագիտություններ
- Նորարարական կրթական կենտրոնների առկայություն (Թումո, Արմատ և այլն)
- Մարզերում ԲՈՒՀ-երի առկայություն՝ որպես ապակենտրոնացման հիմք
- Կրթական դարավոր ավանդույթների առկայություն և անընդհատականություն

- Այլերկրյա ԲՈՒՀ-երի առկայություն Հայաստանում և դրանով պայմանավորված մրցակցություն (Ամերիկյան, Ֆրանսիական, Սլավոնական)
- Պետական և մասնավոր այլընտրանքային դպրոցների առկայություն
- Բոլոնիայի գործընթացի շրջանակներում ամրագրված սկզբունքների ներդրում և արևմտյան կրթական համակարգին միանալու միտումներ
- Դպրոցական, ուսանողական և դասախոսական փոխանակման ծրագրերի առկայություն
- Հեղափոխությամբ պայմանավորված՝ կրթության շահառուների պահանջկոտության աճ
- Կրթական օրենսդրության և իրավական փաստաթղթերի առկայություն
- Բոլոր համայնքներում տարրական դպրոցների առկայություն
- Հայոց լեզուն՝ որպես կրթության զարգացման ռեսուրս

Բացասական կողմեր

- Կրթության տեսլականի բացակայություն
- Դասավանդողների ցածր աշխատավարձ
- Ավագ դպրոցների կրթական ծրագրերի ցածր բովանդակություն, դրանց ռեֆորմի կարիք
- Բնագիտական և ճշգրիտ գիտությունների որոշ ճյուղերի ճգնաժամ
- Դասավանդման մեթոդների անհամապատասխանություն արդի պահանջներին
- Նախագծային կրթության բացակայություն
- Կարողությունների և հմտությունների զարգացմանը նպաստող բաղադրիչների կիրառման ցածր մակարդակ
- Քաղաքացիական կրթության ցածր մակարդակ
- Ուսումնական գործընթացում քննադատական մտածողության ոչ լիարժեք դրսևորում
- Կրթության բովանդակության ծառայեցում որոշակի խմբերի շահերին և գաղափարախոսությանը
- Կրթության կուսակցականացման, առևտրայնացման, ռազմականացման և կրոնականացման խնդիր
- Տղամարդ ուսուցիչների պակաս
- Դասավանդողների և վարչական անձնակազմի ոչ թափանցիկ և անարդար ընտրություն
- Կրթության անմատչելիություն՝ ֆինանսական, ֆիզիկական, ինչպես նաև էլիտարացման միտում
- Կրթության և աշխատաշուկայի միջև անջրպետ
- Միջին մասնագիտական կրթության վատ վիճակ
- Կրթության տարբեր մակարդակների միջև եղած կապի խզում՝ միջնակարգ դպրոց-ավագ դպրոց – միջին մասնագիտական - համալսարան
- Ակադեմիական ազատություններին և բարեվարքությանն առնչվող խնդիրների շարունակականություն
- Կրթության ֆինանսավորման ցածր մակարդակ
- Դպրոց-համայնք կապի բացակայություն

- Կրթություն-գիտություն-տնտեսություն թույլ կապ
- Ուսումնական ծրագրերի խիստ ծանրաբեռնվածություն
- Խզում ուսուցման և ստուգման միջև (քննություններ, շտեմարաններ, կրկնուսույցներ)
- ԲՈՒՀ-երի՝ միջազգային ստանդարտներին համապատասխանեցման դանդաղ ընթացք
- Կրթական ծրագրերի արագ և չհիմնավորված ներմուծում
- Դասագրքերի ընտրության համակարգի թերիություն

Առաջարկներ

Վերլուծելով Հայաստանում կրթության ուժեղ և բացասական կողմերը՝ Կրթության աշխատանքային խումբը երկրորդ աշխատանքային օրվա արդյունքներն ամփոփել էր քաղհասարակության կողմից կառավարությանն ուղղված հետևյալ առաջարկներով.

Տարբերակ 1

- Ձևավորել կրթության նոր տեսլական՝ հիմնվելով իրավիճակի խորքային վերլուծության/ուսումնասիրության վրա
- Տեսլականի ձևավորման համար ստանձնել մասնակցային գործընթաց ապահովելու քաղաքական հանձնառություն (հանրային, մասնագիտական և այլն)
- Ապահովել կրթության ֆինանսավորման կայուն աճ (հետևողականորեն ավելացնել կրթության ոլորտում պետական ծախսերը թե՛ անվանական մեծությամբ, թե՛ ՀՆԱ նկատմամբ)
- Ձևավորել կրթության նոր բովանդակության վրա աշխատող միջմասնագիտական խմբեր

Սակայն, օրվա երկրորդ կեսին խմբին միացավ ԿԳՆ փոխնախարարը: Երկար քննարկումներից հետո խումբը, փոխնախարարի հետ միասին, որոշեց նախորդ օրվա ընթացքում վերհանված ոլորտի բացասական կողմերից քվեարկության միջոցով ընտրել մեկը և առաջարկություններ մշակել կոնկրետ այդ խնդրի լուծման համար: Խմբի անդամներից յուրաքանչյուրը կարող էր ընտրել երեք կետ: Արդյունքում առավելագույն ձայներ հավաքեց «Ավագ դպրոցի բովանադակություն և ռեֆորմ» կետը, որի շուրջ էլ խումբը աշխատեց՝ ներկայացնելով հետևյալ առաջարկները.

Տարբերակ 2

- Վերակազմավորել կրթության բովանդակության համար պատասխանատու մարմինը (ԿԱԻ):
- ԿԳՆ-ին կից և ԿԳՆ միջոցներով ստեղծել հանրային/ մասնագիտական լայն հարթակ՝ կրթության նոր տեսլականի ձևավորման նպատակով (մասնագետներ, քաղ.հասարակության ներկայացուցիչներ, ծնողներ, և այլն), որը կիրականացնի հետևյալը.

- հետազոտության իրականացում
- բովանդակային առաջնահերթությունների որոշում
- կրթության տեսլականի ձևակերպում

- Միջգիտակարգային ուսումնական ծրագրեր մշակել և ներդնել ավագ դպրոցում
- Ամրապնդել նախագծային ուսուցումը ավագ դպրոցում
- Ուժեղացնել ավագ դպրոցում հասարակագիտական առարկաների ուսուցումը (ժողովրդավարական արժեհամակարգի արմատավորում)
- Ավագ դպրոցը դարձնել կրթահամալիրի մաս այնպես, որ նույն համալիրում գործեն կրտսեր, միջին և ավագ դպրոցները
- Ներմուծել կամընտրական առարկաներ
- Վերանայել կրթության բովանդակությունն այնպես, որ ավագ դպրոցից կարողանան ընդունվել ԲՈՒՀ (առանց կրկնուսուցման)
- Ոչ ֆորմալ կրթության ոլորտում փորձառու կազմակերպություններին ընձեռել ավագ դպրոցներում ծառայություններ մատուցելու հնարավորություն (մասնագիտացած ՀԿ-ներ, փորձագետներ)

Խումբ 3. Քաղաքացիական հասարակությունը հանուն մարդու իրավունքների. իրավական համակարգ

Առաջարկներ կրթության ոլորտում

- Քաղհասարակության ներգրավումը կրթական գործընթացում: Խոսքը գնում է այն մասին, որ ՀԿ-ները, որոնք փորձառու են մարդու իրավունքների ոլորտում, ընդգրկվեն դպրոցներում, ԲՈՒՀ-երում դասավանդման գործընթացին
- Տեսաբանների (բուհական, գիտական ոլորտների) և պրակտիկների (քաղհասարակություն, փաստաբաններ) համագործակցություն
- «Մարդու իրավունքներ»-ի, որպես առանձին առարկա, դասավանդում բոլոր ԲՈՒՀ-երում և ֆակուլտետներում
- Իրավաբանական ֆակուլտետներում նեղ մասնագիտացման հնարավորություն՝ բնապահպանական իրավունք, խտրականությանը վերաբերող իրավունք և այլն

Առաջարկներ կառավարությանը

- ԱԱԾ-ն և ոստիկանությունը միավորել և դարձնել մեկ նախարարություն
- Հնարավորություն տալ ՀՀ-ում այլընրանքային և անկախ փորձաքննական մարմինների ստեղծման և աշխատանքի համար
- Վերանայել «Օպերատիվ հետախուզության մասին» օրենքը
- ԱԱԾ-ի նկատմամբ սահմանել պառլամենտական վերահսկողություն:

- Բանակի ներքին կանոնակարգում նախատեսել արդյունավետ բողոքարկման մեխանիզմներ
- Արդարադատության նախարարի լիազորություններում ընդգրկել քրեակատարողական հիմնարկների վարչության պետի նշանակումն ու ազատումը
- Սահմանել քաղաքական ապաստանի տրամադրման կարգավորումներ և չափանիշներ
- Ստեղծել օպերատիվ ստորաբաժանումներ, որոնք հրատապ լուծումներ կտան քրեակատարողական հիմնարկներում և Զինված Ուժերում (ԶՈՒ) ծագող խնդիրներին
- ԶՈՒ մարդու իրավունքների բաժնի աշխատանքի բարելավում
- Դիտարկել Ռազմական օմբուդսմենի կարիքը
- Բարձրացնել ԶՈՒ թեժ գծի արդյունավետությունը
- Օրենքներում սահմանել Actio popularis/class action հասկացությունները և դրանց կիրառման մեխանիզմները

Առաջարկներ քաղաքացիական հասարակությանը

- Հետադարձ կապի/արագ արձագանքման ցանց ստեղծել՝ օգտագործելով քաղհասարակության հնարավորությունները՝ ԶՈՒ ծագող խնդիրներին արագ արձագանքման նպատակով
- Ուժեղացնել ՀԿ-ների կարողությունները իրավական գիտելիքների և գործիքների վերաբերյալ
- Աշխատել ոստիկանության հետ մի քանի ուղղություններով՝ ատելության հիմքով հանցագործություններ, ընտանեկան բռնություն, անչափահասների հետ աշխատանք և այլն: Առաջարկել ոստիկանությանն ընտանեկան բռնության և ատելության հիմքով հանցագործությունների փաստաթղթավորման և չափանիշների մեթոդաբանության վերաբերյալ դասընթացներ անցկացնել և այլն
- Աշխատանք Պաշտպանության նախարարության՝ մարդու իրավունքների բաժնի հետ, թարմացնել ՊՆ-ին կից հանրային խորհուրդը
- Հետաքրքրված ՀԿ-ների ներկայացուցիչների հանդիպում կազմակերպել Դավիթ Տոնոյանի հետ՝ մարդու իրավունքների ոլորտում բարելավումների հետ կապված հստակ առաջարկներով
- Մարզկենտրոններում և քաղաքներում ստեղծել ոստիկանությանը կից հասարակական խորհուրդներ
- Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունն ավելի իրատեսական դարձնել
- Պահանջել Հանրային հեռուստատեսությամբ ցուցադրել 2008թ. մարտի 1-ի իրադարձությունների մասին պատմող, Տիգրան Պասկևիչյանի հեղինակած «Հայաստանի կորսված գարունը» ֆիլմը

Խումբ 4. Կայուն զարգացում և շրջակա միջավայրի պահպանություն

Իրադրության դրական կողմեր

- Հայաստանի կենսաբազմազանություն
- Աշխարհագրական դիրք
- Հասանելի քաղցրահամ ջրային ռեսուրսներ
- Բնական ռեսուրսներ
- Մշակված օրենքներ
- Բնապահպանական ՀԿ-ներ, դատարանում հանրային շահի պաշտպանության իրավունքի առկայություն
- Էկոտուրիզմի զարգացման պոտենցիալ
- Մասնագետների պատրաստում, մասնագիտական կրթություն
- Այլընտրանքային էներգիայի ստացման պոտենցիալ

Բացասական կողմեր

- Փոքր ՀԷԿ-երի խնդիր, ջրերի աղտոտվածություն և աղտոտում
- Օրենքների բացեր և կոռուպցիա
- Հանրային գիտակցության ցածր մակարդակ
- Բնական ռեսուրսների անարդյունավետ շահագործում և կոռուպցիա
- Աղբահանության և աղբի կառավարման բացակայություն
- Կլիմայի փոփոխություն, ջերմոցային գազեր
- Սևանի վտանգվածություն
- Կրթական համակարգում բացեր
- Սոցիալական գովազդի բացակայություն գերատեսչությունների կողմից
- Հողային ռեսուրսների սխալ կառավարում
- Ջրային ռեսուրսների սխալ կառավարում

Առաջարկներ

- Ջրային օրենսգրքի վերանայում և լրամշակում
- «Սևանի մասին օրենք»-ի վերանայում
- Տնտեսության մեջ բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործում և կրճատում
- Աղբահանության ռազմավարության մշակում
- Պոչամբարների ռեկուլտիվացիա
- Բնական պաշարների օգտագործման համար հարկային օրենսդրության վերանայում
- Տրանսպորտի,մասնավորապես հանրային տրանսպորտի կարգավորում
- Սևանի համար համալիր ռազմավարական պլանի մշակում և իրականացում

- Էկոլոգիական դաստիարակություն և կրթություն փոքր տարիքից, ինչպես նաև նեղ մասնագետների պատրաստում
- Մեդիա հարթակների օգտագործում հանրության գիտակցությունը բարձրացնելու նպատակով
- ՔՀԿ-ների ներգրավում բոլոր գործընթացներում

Խումբ 5. Մեդիա

Առաջին օրվա (24.08.18) աշխատանքում իրավիճակը նկարագրելու համար մեդիա դաշտը բաժանվել է 2 մասի՝

1. Ինստիտուցիոնալ մեդիա (հեռուստատեսություն, ռադիո, մամուլ և հարակից կայքեր)
2. Ոչ ինստիտուցիոնալ մեդիա (սոցիալական ցանցեր, բլոգներ և այլն)

1. <u>Ինստիտուցիոնալ մեդիա</u>

Իրադրության դրական կողմեր

- Խոսքի ազատության որոշակի մակարդակ
- Կորպորատիվ պատասխանատվություն՝ որոշ չափով
- Կարծիքների և տարբեր խմբերի շահերի սպասարկման բազմազանություն
- Որոշ չափի պրոֆեսիոնալիզմ
- Օրենսդրական կարգավորումների առկայություն

Բացասական կողմեր

- Կախվածություն տարբեր ֆինանսական աղբյուրներից և վերջիններիս շահերի սպասարկում
- Ծախսատարություն (հատկապես հեռուստատեսության և ռադիոյի դեպքում)

2. <u>Ոչ ինստիտուցիոնալ մեդիա</u>

Իրադրության դրական կողմեր

- Տեղեկատվության տարածման և արձագանքման արագություն
- Մասսայական/մասնակցային հարթակ
- Ինտերակտիվություն
- Գործիքների բազմազանություն և մատչելիություն
- Առաջին ձեռքից տեղեկատվության ստացում
- Խոսքի ազատության ընդլայնում
- Ինքնաարտահայտման մատչելի գործիք

- Ժամանակի և տարածության հաղթահարում
- Հանրային սերտ ինտերակցիա և ինքնակազմակերպում
- Արխիվի հասանելիություն

Բացասական կողմեր

- Արագության հաշվին մանիպուլյացիայի և կեղծիքի լայն սփռում և բարձր արդյունավետություն (ժամանակավրեպի էֆեկտ և աղավաղում)
- Ինֆորմացիայի որակի և պատասխանատվության չափանիշների բացակայություն
- Ատելության խոսք և անհանդուրժողականություն
- Հանրային պառակտում և կարծիքների բևեռացում
- Stimul – Interpretation – Reaction շղթայից 2-րդի դուրսմղում և մակերեսային ընկալում
- Անձնական կյանքի տվյալների գաղտնիության խախտում
- Հեղինակային իրավունքների խախտում
- Անչափահասների անձնական և տեղեկատվական անվտանգությանը սպառնալիք
- Մեդիայի չֆորմալանալը՝ որպես անպատասխանատու աշխատառճի հնարավորություն

Առաջարկներ (Օր առաջին)

- Մեդիագրագիտության բարձրացում
    - Քննադատական մտածողության խթանում կրթական համակարգում
    - Լրագրողների վերապատրաստում
    - Ուսուցողական նյութերի ստեղծում և շրջանառում
    - Սեմինարների կազմակերպում քաղաքացիական հասարակության համար
- Տեղեկատվության ստուգման և ճշտման մեխանիզմների խթանում
- Փորձագիտական խմբերի ստեղծում կեղծիքի բացահայտման համար
    - Մեդիայի ֆինանսական թափանցիկության ապահովում
    - Մեդիայի ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցում
    - Նվիրատվություններ
    - Բաժանորդագրություն
- Մեդիայի կամ որոշակի թեմաների հանրային ֆինանսավորում
- Դեղին մամուլին հակակշիռ բևեռի ստեղծում և աջակցություն
- Բյուջետային ֆինանսավորման մրցակցային դաշտի խթանում
- Դիտորդ մարմնի լիազորությունների ընդլայնում
- Լրագրողների նեղ մասնագիտացում
- Լրագրողի թեմատիկ պատրաստվածություն
- Զրպարտանքի կամ ապատեղեկատվության դեմ տարված հաղթանակի հաջողված դեպքերի հանրայնացում
- Նեթիկետի հանրայնացում

- Անչափահասի ինտերնետային պաշտպանվածության վերաբերյալ մեծահասակների կրթում
- Անչափահասների ինֆորմացիոն պաշտպանվածության ֆիլտրերի և ծանուցումների ստեղծում

(Օր երկրորդ)

- Կառավարության կողմից ձևավորված կամ առկա կառույցների կոնսոլիդացիոն մարմնի կողմից մեդիագրագիտության ռազմավարության մշակում, որը պետք է ներառի հետևյալ (բայց ոչ միայն) խնդիրները.
    - ՀԿ-ների, կրթական և հետաքրքրված այլ կառույցների ներգրավում
    - մեդիագրագիտություն
    - քննադատական մտածողություն
    - դիսկուսիոն հմտություններ
    - նեթիկետ
- Անչափահասների մեդիապաշտպանվածություն (անձնական տվյալների գաղտնիություն (օրինակ՝ ճամբարներից մեկում ուրախների և հնարամիտների ակումբի դեպքը) և այլ սկզբունքներ) ուսուցանող նյութերի ստեղծման խթանում/շրջանառում/ուսուցանում համապատասխան օղակներում, ինչպես օրինակ՝
    - <u>հանրակրթական դպրոցներում՝</u> առանձին առարկայի կամ բոլոր առարկաներում վերը նշված նյութերի ինտեգրման միջոցով,
    - <u>լրագրողների շրջանում՝</u> սեմինարների ու վերապատրաստումների միջոցով,
    - <u>լայն հանրության շրջանում՝</u> ԶԼՄ-ներով շրջանառման միջոցով,
    - <u>ծնողների շրջանում՝</u> ծնողների հետ առնչվող կառույցների միջոցով, ինչպես նաև 5-րդ կետի **ապահովում՝** համապատասխան մեխանիզմների սահմանման և գործարկման միջոցով:

- Թվայնացման մասին օրենքի բարեփոխում: Թվային հեռարձակման մասնավոր ցանցի (multiplex) ստեղծման համար առաջադրված **բարդ և հսկայական ներդրումներ պահանջող պայմանների վերանայում**, քանի որ հետևանքն այն է, որ որևէ մեկը չի ցանկանում ստեղծել մասնավոր մուլտիպլեքս և արդեն 3 տարի հայտարարված մրցույթին ոչ ոք չի մասնակցում, իսկ մարզերում գործող 10-ից ավելի տեղական հեռուստաընկերությունները դուրս են մնացել թվայնացման գործընթացից՝ շարունակելով գործել անալոգային ռեժիմով՝ կորցնելով լսարանն ու հայտնվելով փակման վտանգի առջև:
- Հանրային հեռուստառադիոընկերության (ՀՀՌԸ) մասին օրենքի բարեփոխում, որը թույլ կտա հասնել՝
    - խորհրդի ձևավորման

- արդյունավետ կառավարման ձևի ու կառուցվածքի
- բովանդակության որակի բարձրացման և առաջնահերթությունների սահմանման
- հանրային մասնակցության մեխանիզմների հարցերում առավել մեծ արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության

Նաև առաջարկվում է ստեղծել.

- «Հանրային» օմբուդսմենի ինստիտուտ՝ **մարմին կամ կոալիցիա**, որը սահմանված պարբերականությամբ կտա ՀՀՌԸ-ի գործունեության՝ վերը շարադրված կետերով նախատեսվածին համապատասխանության մասին «**այլընտրանքային հաշվետվություն**»՝ ՀՀՌԸ-ի գործունեության նկատմամբ վստահելի և անաչառ վերահսկողությունը բարձրացնելու համար:
- ՀՀՌԸ-ին տրամադրվող բյուջետային որոշ միջոցների տենդերներ, որով սահմանված թեմատիկայով հաղորդումների/նյութերի պատրաստման հարցում կմրցեն տարբեր ԶԼՄ-ներ, իսկ հաղթողը կստանա պետական ֆինանսավորմամբ դրանք պատրաստելու և ՀՀՌԸ-ով թողարկելու հնարավորություն: Սա թույլ կտա մրցակցային դաշտի շնորհիվ որոշ չափով բարձրացնել բյուջետային միջոցների ծախսման արդյունավետությունը և ստեղծվող նյութերի որակը:
- Մեդիայի իրական սեփականատերերի և ֆինանսական աղբյուրների թափանցիկության ապահովում: Քանի որ իրական սեփականատերերին թաքցնելու մեխանիզմները շատ են, խումբը խորհուրդ է տալիս օգտվել ԱՃԹՆ-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն, EITI) «իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի» տրամաբանությունից: (https://eiti.org/sites/default/files/documents/bo_roadmap_draft_arm_0.pdf):
- Գերատեսչությունների պրոակտիվ գործունեություն: Մեդիամանիպուլյացիաները և կեղծ լուրերը կանխելու նպատակով խումբը խորհուրդ է տալիս գնահատել գերատեսչությունների՝ հանրային կապերով զբաղվող օղակների գործունեության մեխազնիմների արդյունավետությունը և աշխատանքների որակի բարձրացման միջոցառումներ ձեռնարկել (խումբը հիմք է ընդունում, օրինակ, այնպիսի մասսայական տագնապ առաջացնող մանիպուլյացիաներ, ինչպիսին էր «գարդասիլ» պատվաստանյութի ներդրման, «գենդերային» կոչվող օրինագծի ընդունման և այլնի շուրջ ստեղծված մեդիաբովանդակությունը):

Խումբ 6. Տարածքային համաչափ զարգացում

Խումբը քննարկեց հետևյալ հարցերը. քաղաքային-գյուղական համայնք ռեսուրսների բաշխման անհամաչափություն, գյուղական վայրերի՝ որպես հանրապետության կարևոր ստրուկտուրայի, թերագնահատում, բոլոր մակարդակներում որոշումների ընդունման

գործում նեպոտիզմի և շահերի բախման սուր մշակույթ ու դրանց տարբեր դրսևորումներ, որոնց արդյունքում ունենք՝ մարզային և գյուղական համայնքների մակարդակում աշխատանքային թերի ռեսուրս՝ քաղաշխատողների մոտ կառավարման և այլ կարևոր հմտությունների բացակայություն, ռեսուրսների կենտրոնացվածություն կամ սուբսիդավորվող ռեսուրսի տրամադրում հիմնականում հարազատ-բարեկամական կապերի շնորհիվ, պատասխանատվության և հաշվետվողականության բացակայություն և համայնքի անդամների մոտ՝ իրենց իրավունքն օգտագործելու, մի բան փոխելու, նոր բան նախաձեռնելու հավատի, վստահության և մոտիվացիայի բացակայություն: Այլ ընդհանուր տուժվող արժեքային խնդիր է գյուղաբնակ անձանց արժանապատիվ պայմաններ ունենալու չիրացված իրավունքը:

Իրադրության դրական կողմեր

- Համայնքների ռեսուրսների բազմազանություն
- Սոցիալական ամուր կապիտալ
- Սեփականության առկայություն. հող, կենդանիներ, պարենի աղբյուր՝ տնամերձ, հողատարածքներ և այլն
- Էժան աշխատուժ
- Սփյուռքում հայրենակիցների առկայություն
- Համայնքներում չիրացված և/կամ չբացահայտված հնարավորություններ
- Ինտերնետի հասանելիություն
- Տեղական ավանդույթների բազմազանություն

Բացասական կողմեր

- Անարդար համահարթեցում
    - Մարզային պետական կառույցների անարդյունավետություն
    - Մարզպետարանների աշխատակազմի չափազանց մեծ կազմ
    - Աշխատողների հմտությունների բացակայություն
    - Խնդիրների լուծման համար թույլ կապ մարզպետարանների հետ, օր. չի ապահովում մարզկենտրոն-համայնք կապի միջոցով, այլ համայնք – ենթամարզկենտրոն, կամ համայնք – Երևան
- Համայնքների մի մասում ՔՀԿ-ների պակաս կամ նրանց թույլ լինելը
- Համայնքի չբացահայտված և/կամ չօգտագործվող ռեսուրսներ. հողեր, բիզնեսի և տուրիզմի պոտենցիալ, մարդկային ռեսուրսներ և այլն
- Սուբսիդիաների հատկացման անարդյունավետություն (կարիքի չափազանցվածություն /գերագնահատում)
- Նեպոտիզմի և շահերի բախման մշակույթի վնասը որոշումների կայացման գործընթացում

- ՏԿՄ և ՏԻՄ աշխատակազմի կարողությունների բացակայություն կամ թուլություն
- Միջհամայնքային և ներհամայնքային հաղորդակցության ուղիներ
    - Տրանսպորտային երթուղիների թերի լինելը
    - Տրանսպորտային գործող երթուղիների անբավարար կազմակերպվածություն, կամայականություն, չվերթների գրաֆիկների, տոմսարկղերի, կայանների բացակայություն ու վատ վիճակ
    - Ճանապարհների կամ բացակայություն, կամ անմխիթար վիճակ, որը դժվարացնում է նաև գյուղմթերքների առևտուրը, մերձավոր համայնքների հետ աշխատանքային կապը և այլն։
- ՏԻՄ-երի կողմից մշակված ռազմավարությունների ստանդարտ կամ թերի լինելը.
    - Ստեղծագործական մոտեցումների բացակայություն
    - Ոչ մրցակցային ռազմավարության կազմում
    - Այլ համայնքների ռազմավարությունների արտագրում
    - Ռազմավարություններում արվեստի, ձեռնարկատիրական ծրագրերի պակաս
- Տեղական հարկային քաղաքականության թուլություն՝ այն միտված չէ զարգացման, այլ միտված է միայն գոյության պահպանմանը
- Գյուղական կյանքի միֆեր
- Միջհամայնքային համագործակցության պակաս. համատեղ խնդիրների լուծում, համատեղ ծրագրերի մշակում և այլն
- Հարկային քաղաքականության մեջ դիվերսիֆիկացիայի պակաս
- Քաղաքական կուսակցությունների անտարբերություն համայնքների նկատմամբ, դրանց պարզապես որպես անձնական կապերի միջոցով էլեկտորալ ռեսուրս դիտելը
- Երկրում անհամաչափ աղքատություն
- Համայնքների խոշորացման հետևանքով առաջացած խնդիրներ
- Խոշորացման ծրագրի ապագայի անորոշություն
- ՏԻՄ-երի պաշտոնական կայքերի թերի լինելը, ոչ նպատակային օգտագործում, հաշվետվողականության պակաս
- Մասնավոր շահերի ներմուծում համայնքի զարգացման ծրագրերում
- Մարդկանց մոտ հուսահատության, անկարողության զգացում
- Հանրային ծառայությունների ցածր մակարդակ/որակ, նաև կրթության, առողջապահության և այլն
- Ֆոնդերի, ներդրումների անհամաչափության և համակարգվածության պակաս
- «Կոտրած պատուհանների» համախտանիշ՝ այսինքն, չլուծված խնդիրներն ավելի են խորանում
- Ժողովրդագրական խնդիրներ. ծերացած և ծերացող բնակչություն, երիտասարդների արտահոսք
- ՏԻՄ կարողությունների ցածր մակարդակ, կոռումպացվածություն
- Լավ օրինակի հանրայնացման պակաս, հատկապես համայնքի զարգացման գործերում

- ՏԻՄ պաշտոնյաների մոտ շահերի բախման խիստ կարգավորվածության պակաս կամ բացակայություն
- Համայնքներում սոցիալական պաշտպանվածության խնդիրների լուծման ռեսուրսների և սոց աշխատողների պակաս

Առաջարկներ

- Վերացնել ավելորդ վարչական օղակները և հաստիքները համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում
- Համահարթեցման բանաձևի արմատական փոփոխություն. խնդիրների հիերարխիայի, գոտիականության սահմանում, բոնուսների համակարգի սահմանում
- Ավելացնել գյուղական համայնքների ֆինանսավորման մասնաբաժինը
- ՏԻՄ լիազորությունների և ֆինանսական միջոցների ավելացում
- Տրանսպորտային ենթակառուցվածքների ներմուծման նպատակով քննարկումներ ՏԻՄ-երի հետ
- Շրջանառու հիմնադրամների ստեղծում (Խազեր ՀԿ-ի առաջարկը)
- Վերացնել հովանավորչության (նեպոտիզմ) բացասական մշակույթը համայնքում, տարածաշրջանում
- Կարողությունների զարգացում. բիզնես մոտեցումների, ծրագրերի կառավարման ուղղություններով
- Որոշ պետական կառույցների տեղափոխում մոտակա մարզեր (օրինակ՝ նրանց, որոնք օպերատիվ կապի մեջ չեն կենտրոնական գործադիր իշխանության ստրուկտուրաների հետ)
- Միջհամայնքային նշանակության կառույցների կառավարման նոր ձևերի մշակում
- Շահերի բախման խիստ կարգավորում. ՏԻՄ պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման ներդրում
- Հողերի կոնսոլիդացված մշակման խթանում, տեխնիկական վերազինում, նոր բուսատեսակների մշակություն
- Հարկային/կոմունալ արտոնություններ երիտասարդների (մասնագետների) համար
- Մշակութային, համայնքահեն ձեռնարկատիրության ներդրում (ստեղծագործ ինդուստրիաների զարգացման մոդելով)
- Տարածակազմակերպման բարելավում

Խնդիրների վերացման տարբերակներ (հրատապ, իրագործելի, կարևոր)

- Թեթևացնել մարզպետարանների աշխատակազմը
- հարցի բարձրացում, քննարկումներ, հետազոտություններ
- կառավարության որոշում
- աշխատանքային (պաշտոնի) անձնագրերի վերանայում (ՔՀԿ-ները կարող են օգնել այս հարցում)

- այլ ֆունկցիաների պատվիրակում մարզային և կենտրոնական կառույցներից դեպի համայնքներ
- լիազորությունների վերանայում

- Վերանայել համահարթեցման բանաձևը. չնայած բանաձևը արտացոլում է քաղաքների կողմից պետ.բյուջե ներմուծվող հարկերի ծավալին համապատասխան հատկացում նույն քաղաքային, սակայն արդյունքում գյուղական վայրերը՝ որպես նվազ/թույլ հարկահավաք կառույց, ավելի են թուլանում, հայտնվում են խտրականության գոտում՝ առաջացնելով մեծ հոսք գյուղական վայրերից դեպի քաղաքներ։
- Մասնագիտական քննարկումներ. հնարավորություններն ու ռիսկերը (ՔՀԿ-ները կարող են օգնել այս հարցում)
- Օրենքի փոփոխության գործընթացի նախաձեռնում
- Բոնուսների ներդրումը ըստ ստրատեգիական հատվածավորման
- Հանրային հետաքրքրության աճ
- ՏԻՄ լիազորությունների ավելացում

- Համայնքային հաղորդակցությունների ենթակառուցվածքների բարելավում
- Հիմնական բաղադրիչները. տրանսպորտային միջոցներ և ճանապարհներ
- Շուկայի վերլուծություններ
- Միջհամայնքային մրցույթների կազմակերպում մարզպետարանի կողմից
- Համայնքապետարանների կողմից իրականացման վրա խիստ վերահսկողության սահմանում
- Հանրային վերահսկողության սահմանում՝ մրցույթի իրականացման վրա
- Շահութաբերության ապահովման համար համաֆինանսավորման պլանավորում համայնքային բյուջեներում
- Նպատակային սուբսիդիաների և դոտացիաների միջոցների ներգրավում
- Ֆիսկալ վերահսկողություն

- Կարողությունների հզորացում (ՔՀԿ-ները կարող են իրականացնել սա)
- Ոլորտի ՏԻՄ օրենսդրության
- Հակակոռուպցիոն / Շահերի բախման բացառման
- Կառավարման
- Ծրագրերի կառավարման
  - Բիզնես մտածողության ուղղություններով

- Տեղական մակարդակում ձեռնարկատիրության զարգացում
  - (Տեղական ՔՀԿ-ները կարող են օգնել այս հարցում որպես կապող օղակ)

- Տեղական մակարդակում ձեռնարկատիրության զարգացում, այդ թվում՝ ստեղծագործ ինդուստրիաների զարգացում
- Հարկային, վարկային, սոցիալական արտոնությունների սահմանում
- Հիփոթեքային արտոնյալ վարկային ռեսուրսների ստեղծում մարզերի համար

- Սոցիալական պաշպանության ուժեղացում համայնքներում (մասնագիտացած ՔՀԿ-ները կարող են օգնել այս հարցում)
- Բյուջեի ապակենտրոնացում՝ նախարարություններից տվյալ բյուջեի փոխանակում համայնքների բյուջե
- Համայնքների սոցիալական խոցելիության քարտեզագրում, կարիքների ձևակերպում
- Տարբեր սոցիալական ծառայությունների ստեղծում

Խումբ 7. Ընտրություններ, քաղաքականություններ, ռազմավարություններ. Կառավարություն- ՀԿ-կուսակցություն կապը և հաղորդակցությունը

Դրական կողմեր

- Կուսակցությունները ազատ ռեսուրս են (կուսակցական դաշտը նոսր է, նոր կուսակցությունների և կուսակցական ակտիվության մեծ հնարավորություններ կան)
- Այսօրվա իրավիճակը շատ բարենպաստ է (կուսակցական ակտիվություն դրսևորելու համար, չկան կապանքներ, կա հանրային պահանջարկ)
- Այս իրավիճակում (ստեղծվել է) ազատ, արդար ընտրություններ կազմակերպելու հնարավորություն
- (Առկա է այն) գիտակցության արձանագրումը, որ հայկական ժողովրդավարությունն առանց կուսակցությունների չունի ապագա
- Մարդու մասնակցությունը կառավարմանը հնարավոր է իրականացնել կուսակցության միջոցով

Բացասական կողմեր

- Համակարգված կապը ՀԿ-ների ու կառավարության միջև բացակայում է
- ՀԿ-ները հիմնականում ապաքաղաքականացված են
- Կուսակցությունների դասական մոդելը Հայաստանում երբեք չի կիրառվել
- Կուսակցությունները չունեն գաղափարախոսություններ: Թեև հիմնական խնդիրը ոչ թե գաղափարախոսությունների բացակայությունն է, այլ ընտրությունների բացակայությունը: (Այդ բացակայության դեպքում կուսակցությունները համարում են, որ իրենց պետք չէ գաղափարախոսություն, քանի որ չկա ընտրություններով իշխանության հասնելու կամ մասնակցելու հնարավորություն)

- Կրթական առկա մոդելի պատճառով քննադատական վերլուծական մտածողություն չի ձևավորվում
- Ռազմավարությունների մշակման, կանխատեսման, կանխարգելման ինստիտուտների բացակայություն
- Ռազմավարություններ մշակողը այսօր միայն կառավարությունն է
- ՀԿ-ների հիմնական ֆինանսավորումը եղել է դրսից, որը միշտ չէ, որ միտված է տեղական հիմնախնդիրների բացահայտմանը և լուծմանը
- Կուսակցությունների ֆինանսավորման խնդիրը (լուծված չէ):

Առաջարկներ

- Հաղորդակցության նոր մոդելներ ստեղծել – պլատֆորմ ՀԿ-կուսակցություն-կառավարություն, պլատֆորմում ընդգրկել մեդիան և մասնագիտական քննարկումներում ընդգրկել կուսակցությունների լայն շրջանակները
- Պարբերական հիմքի վրա դնել միացյալ սեմինարների կազմակերպումը (ՀԿ-կուսակցություն-կառավարություն) և դրանք դարձնել ոլորտային՝ տնտեսություն, մշակույթ և այլն
- Հանրային խորհդի վերաձևակերպում
- ՀԿ-ների կապը կառավարության հետ իրականացնել հանրային խորհրդի միջոցով, որը ձևավորվելու է քաղ. հասարակության ներկայացուցիչներից
- Ռազմավարությունների մշակման համար. (առաջարկը ձևավորվում է) պետպատվերի ձևով և առաջարկվում ՀԿ-ներին, ինչը կլուծի ՀԿ-ների ֆինանսավորմամբ ապահովելու հարցը, իրենց հնարավորություն կտա դառնալ անկախ, դա պետք է արվի մրցույթային կարգով
- Մասնագիտական խմբերի հետ (կառավարության ու կուսակցությունների համատեղ) աշխատանքը կօգնի ձևավորել/ստեղծել արդյունավետ ռազմավարություններ
- Կուսակցությունները պետք է ունենան (աշխարհի, երկրի) ունիվերսալ պատկերը (այսինքն, չլինեն «մասնագիտացված», «դուք հայրենասեր եք, իսկ մենք՝ բնապահպան»):
- Անհրաժեշտ է մասնագիտական խմբերի և անհատների հետ աշխատանք (կառավարության կողմից)
- Կուսակցությունների սահմանման հարցում որոշակի չափանիշների ձևավորում (օրինակ՝ ծրագրահենություն, ունիվերսալ պատկերի առկայություն, ներքին ընթացակարգերի գոյություն և կիրառում):

Խումբ 8. Կանայք նոր իրադրության պայմաններում

Դրական կողմեր

- Կա հանրային դիսկուրս (կանանց անհավասար իրավունքների վերաբերյալ)
- Գենդերի դասաժամ (դպրոցական ծրագրերում)
- Առկա է սոցիալապես կայացած կանանց շերտ
- Կանանց ակտիվ դերը հեղափոխության մեջ
- (ի հայտ են եկել) Դրական կին քաղաքական գործիչներ
- Քաղաքական էլիտայի փոփոխություն (ինչը հնարավորություն է տալիս կանանց ներգրավվել առաջացող նոր էլիտայի կազմում)
- Հակակոռուպցիոն և հակաբռնական միտում (նոր իշխանության գործելաոճում. դրական է, որովհետև կանայք առաջադիմելու քիչ հնարավորություն և հակում ունեն կոռուպցիայի և բռնության ասպարեզներում, և ավելին՝ օրինականության ու համերաշխության մթնոլորտում)
- Խրախուսող և հակակարծրատիպային հռետորիկա (որպես հեղափոխության հետևանք)
- Քվոտաներ (նախատեսվում է ապահովել կանանց ոչ պակաս քան 30 տոկոսանոց մասնակցությունը որոշում ընդունող մարմիններում, ապագայում այդ քվոթան ընդլայնելու մասին բանակցություններ են գնում)
- Օրենքներ (օրենքները և Սահմանադրությունը ամրապնդում են կանանց իրավահավասարության նորմը)

Բացասական կողմեր

- Քվոթաները քիչ են, համակարգային չեն (չեն նախատեսում սեռերի հավասար ներկայացվածությունը, չեն տարածվում որոշում ընդունող բոլոր օղակների վրա
- Խտրական մենթալիտետի պահպանում (հասարակությունում)
- Փակ ոլորտներ կանանց համար (ուժային կառույցներ և բանակ, շինարարություն և տրանսպորտ, դիվանագիտություն՝ ոլորտներ, որոնք համեմատաբար եկամտաբեր են ու ապահովում են աշխատողներին որոշակի հանրային կարգավիճակ)
- Ոլորտներ հիմնականում կանանց համար (երեխաների խնամակալություն, տնային աշխատանք, կրտսեր ու միջին տարիքի երեխաների ուսուցանում, քարտուղարի աշխատանք՝ ոլորտներ, որոնք համարվում են «կանացի», համեմատաբար վատ են վարձատրվում կամ չեն վարձատրվում և ենթադրում են աշխատողների ոչ-պրեստիժային կարգավիճակ)
- Մեդիան քարոզում է խտրականություն (ի նկատի են ունեցվել սերիալները և հոգեբան, հոգևորական, բժիշկների մասնակցությամբ հաղորդումները, որտեղ հաճախ ուղղակի քարոզվում է խտրականություն, իբր, մասնագիտական տեսակետից)

- Կրթական բարձր մակարդակում կանանց ներգրավվածության պակաս (բարձրագույն կրթական հաստատությունների ղեկավարներ, ավագ դասախոսական կազմ, ասպիրանտներ)
- Կենցաղի ոչ համաչափ բաշխում
- Աշխատավարձերի անհամաչափություն
- Գործատուի կողմից խտրական վերաբերմունք
- Խտրականության դեմ օրենսդրության թերիություն (օրենսդրությունը չի ամրագրում խտրականությունը, սակայն դրա դեմ հատուկ մեխանիզմներ չի պարունակում)

Առաջարկություններ

- Պետության կողմից քվոթաների շարունակաբար բարձրացում, օրինակ, ընտրությունից ընտրություն
- Քաղհասարակության կողմից հասարակության շրջանում կանանց քաղաքացիական գիտակցության բարձրացում, կուսակցությունների երիտասարդական թևերի հետ աշխատանք (կանանց ներգրավվածության ու դերի բարձրացման հարցում), կին քաղաքական գործիչների կարողությունների բարձրացում
- Պետության կողմից խտրական բացառման մասին հատուկ օրենքի ընդունում, գենդերային հավասարության մասին օրենքի վերանայում (երաշխավորող դրույթների ավելացում), ՀԿ-ների կողմից՝ իրավապաշտպանական աշխատանք և (հանրային) իրազեկվածության ավելացմանն ուղղված աշխատանք
- Մշակել (լուսավորչական) ռազմավարություն, որը պետության կողմից խրախուսական աշխատանք /կտանի/ սոց. գովազդների խրախուսման ուղղությամբ
- ԶԼՄ-ների և հեռուստատեսության մասին օրենքների վերանայում (կատարվի, խտրականության բացառման համար), բարձրացվեն (իրավահավասարությանը վերաբերվող) սոց. խնդիրներ
- ՔՀԿ-ներն իրականացնեն գենդերային խտրականության ոլորտի հետ կապված մշտադիտարկման աշխատանքներ
- Պետության կողմից խրախուսական պրոակտիվ քաղաքականություն վարել բարձրագույն կրթության ոլորտում կանանց դերի բարձրացման ուղղությամբ՝ fellowship, հատուկ տեղեր կանանց համար
- ՔՀԿ-ների կողմից դասագրքերը վերանայել գենդերազգայուն հարցերի տեսակետից
- Վերապատրաստել ուսուցիչներին և դասախոսներին (գենդերային հարցերը ճիշտ լուսաբանելու ուղղությամբ)
- Պետության կողմից վարել պրոակտիվ քաղաքականություն 40 անց տարիքում կանանց ներգրավելու դեպքում (իրականացնել գործատուների համար) հարկային բեռի թեթևացում

Խումբ 9. Կառավարման ռեֆորմներ

Դրական կողմեր

- Կոռուպցիայից զերծ կառավարման վճռականություն կառավարության ղեկավարության մեջ
- Կադրային փոփոխություններ են տեղի ունենում(ներկայացվեցին դրական և բացասական կողմերը)
- Կառարավարությունը բաց է առաջարկությունների և գործակցության համար (ներկայացվեցին դրական և բացասական կողմերը)
- Գիտակցվում է քննարկումների հարթակների կարևորությունը, այդ թվում՝ առցանց և ոչ առցանց
- Միջազգային կառույցների աջակցության պատրաստակամություն, /հանրության ոգևորությունը կառուցողական մասնակցություն ցուցաբերելու պետականաշինությանը/։

Բացասական կողմեր

- (կառավարումը պետության մասշտաբով) Մասնակցային չէ
- (Ազգի ?) Ներուժը արդյունավետ չի օգտագործվում
- Կարծրացած մտածելակերպ
- Առկա է կառավարման համակարգի ճգնաժամ (պետական, տարածքային, տեղական մակարդակներում)
- Կառավարման կենտրոնացում (մեկ կենտրոնից/մեկ անձի կողմից կառավարման ավանդույթ)
- Թույլ հանրային գիտակցություն
- Մոտիվացիոն մեխանիզմների (պակաս կամ) բացակայություն
- Կադրերի ընտրության հստակ մեխանիզմների ամրագրման բացակայություն
- Կառավարման արդյունավետության բացակայություն
- Օրենքների կամընտրովի կիրառում
- (Քիչ թե շատ հստակ) տեսլականի բացակայություն
- Ծառայությունների պատվիրակման մեխանիզմների պակաս
- Հանրային մոնիթորինգի ինստիտուտի բացակայություն (թերի լինելը)
- Հետազոտության վրա հիմնված քաղաքականության/քաղաքականությունների /մշակման անհրաժեշտություն
- Անարդյունավետ հաղորդակցություն կառավարության և քաղ.հասարակական կազմակերպությունների միջև (ֆիլտրող կամուրջների բացակայություն)
- Ոչ թափանցիկ աշխատանք և տեղեկատվության պակաս
- Քաղծառայողների/հանրային ծառայողների աշխատանքի ցածր վարձատրություն, թերություններ աշխատանքի ընդունման գործընթացներում
- Կառավարման համակարգի ուռճացված ապարատ

- (Տարբեր հիմնարկների) գործառույթների համընկնումներ, վերադրումներ(վերածածկ)
- Նախարարությունների արտաբյուջետային հաշիվների վերանայում և վերացում, արտաբյուջետային հաշիվների փոխարեն քաղծառայության համակարգում բոնուսային համակարգի ներդրման անհրաժեշտություն և կառավարման մեխանիզմների հստակեցում
- Տեսչական գործառույթների ոչ նպատակահարմար բաշխում պետական, մարզային և տեղական մակարդակներում

Առաջարկներ

- Միջգերատեսչական համագործակցության արդյունավետության բարձրացում տարբեր մակարդակներում
- Կառավարության կառուցվածքի վերանայում, այդ թվում՝ տարածքային կառավարման մարմինների դերի հստակեցում և իրավակարգավորում, պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների հստակեցում իրավակարգավորման և իրավակիրառ պրակտիկայի առումով
- Պետական գույքի արդյունավետ կառավարում
- Արտաբյուջետային միջոցների և դրանց բաշխման առնվազն խնդրականացում, հանրայնացում՝թափանցիկության պարտադիր ապահովման պայմանով, եթե հնարավոր չլինի իսպառ վերացնել արտաբյուջետային հաշիվների միջոցով ֆինանսական միջոցների բաշխման գործառույթը
- Որոշ ծառայությունների և գործառույթների պատվիրակում քաղհասարակության կամ մասնավոր հատվածի կազմակերպություններին՝ օրենսդրությամբ սահմանված մեխանիզմներին համապատասխան
- Որոշ ՊՈԱԿ-ների, ԾԻԳ-երի, հիմնադրամների վերակազմավորում գործառույթների սահուն փոխանցման ապահովմամբ՝ համապատասխան մշակված ժամանակացույցերի ու գնահատման արդյունքների հիման վրա
- Հատուկ վարձատրության մեխանիզմների մշակում և ներդրում պետաշխատողների /հանրային ծառայողների համար՝հիմնված նախաձեռնողականության և արդյունավետ աշխատանքի չափանիշների վրա
- Ձևավորել քաղաքացիական հասարակության առաջարկների տարափը ֆիլտրող ու համակարգող կառույցներ /օրինակ՝ շտաբ հիմնել կամ ուժեղացնել նախարարին կից հասարակական խորհրդի դերակատարությունը՝ վերջինիս վերապահելով այդ գործառույթը/ և սատարել դրանց ֆինանսապես՝ /տարածք ու գույք տրամադրելով/
- Քաղաքացիների, ՔՀ և այլ կառույցների ներկայացուցիչների դիմումների տիպային ձևերի մշակում և առցանց հասանելիության ապահովում
- Հասարակական, համայնքային գործունեության մշակույթի ձևավորում և ներդրում կրթական համակարգում՝ սկսած տարրական մակարդարդակներից (մանկապարտեզ-դպրոց)

- Հանրային մարմինների պարբերական հրապարակային հաշվետվությունների ներկայացում

Խումբ 10. Մշակույթ

Դրական կողմեր

- Մշակութակենտրոն ինքնություն
    - գրագետ մարդու հեղինակավոր ստատուս
- Միջազգային մակարդակի կոլեկտիվներ և անհատներ
- Հայ մշակույթի միջազգային կամ գլոբալ բնույթ
- Կայացած ամենամյա մշակութային միջոցառումներ (Ոսկե Ծիրան)
    - միջազգային մշակութային միջոցառումներին մասնակցություն (անհատներ, պատվիրակություններ)
- Ժամանակակից արվեստի ներուժ (կայացած ինստիտուտներ)
- Նոր ստեղծագործական դրամաշնորհներ Մշակույթի նախարարության կողմից (զարգացման պրոցեսում)

Բացասական կողմեր

- Մշակութային գործիչների խոցելիություն, գործունեության ռիսկայնություն
- Կոռուպցիա – քաղաքական (գաղափարական) և ֆինանսական (փակ տենդերներ)
- Կառավարման իներցիա – ժամանակակից մեխանիզմների բացակայություն, մշակութային ՀԿ-ների իրավահավասարության բացակայություն
- Մշակութային օջախների կենտրոնացում Երևանում
- Մշակութային օջախների անմատչելիություն հաշմանդամների համար
- Մշակույթի ազգայնականացում
- Մշակութային քաղաքականության բացակայություն- օրենսդրական դաշտի բաց, հարկային վատ քաղաքականություն
- Մշակութային գործիչների և նրանց գործունեության կաղապարվածություն
- Արվեստի բուհերի անարդյունավետություն, հին մեթոդներ, ժամանակակից մասնագետների պակաս
- Մշակութային տարածքների հնություն – ազատ ստեղծագործական տարածքների բացակայություն
- Թափանցիկության և հանրային կապերի ոչ արդյունավետություն
- Նոմենկլատուրային մոտեցում

Առաջարկներ

- Ներդնել մշակույթի բնագավառին համապատասխանող ապահովագրան մեխանիզմ (համագործակցել միջազգային մշակութային միությունների հետ)
- Հաղորդակցության նորագույն միջոցների օգտագործում
- Մշակույթի ապաքաղաքականացում
- Թափանցիկ մրցութային համակարգ
- Կառավարման նորարարություն, ժամանակակից մեխանիզմների ներդրում մշակույթի բնագավառում
- Մշակութային մոնոպոլիաների վերացում (միություններ, փառատոններ-ՀԿ-ներ)
- Համայնքային մշակութային կենտրոնների զարգացում, գործիչների ներգրավում
- Կառավարման ապակենտրոնացում
- Մատչելիության ապահովման համար առաջնահերթությունների գործողությունների պլան
- Գլոբալ մտածողության խթանում, միջազգային նախագծերի խրախուսում
- Մշակութային հայեցակարգի մշակում, ներկայացում հանրությանը
- Մշակութային ոլորտի ազատականացում (գաղափարական, տնտեսական)
- Արվեստի բուհերի ռադիկալ ազատականացում
- Մշակութային կենտրոնների արդիականացում
- Ազատ լաբորատորիաների ստեղծում
- Թափանցիկության և հանրային կապերի ժամանակակից, արդյունավետ մեթոդների ստեղծում
- Պետությունը պետք է հանդես գա որպես թիվ 1 մենեջեր

Խումբ 11. Քաղաքացիական հասարակության զարգացում

Դրական կողմեր

- ՔՀԿ-ների և դոնորների ջանքերի շնորհիվ ունենք «ՀԿ-ների մասին» հիմնականում լավ օրենք
- Ներկա իշխանությունների կողմից ցուցաբերվել է քաղաքական կամք՝ ՔՀԿ-ներին դիտարկելու որպես գործընկեր երկրի ժողովրդականացման և հիմնախնդիրների լուծման գործում

Բացասական կողմեր

- ՔՀԿ-Պետություն համագործակցության միակ փաստաթուղթ հանդիսացող ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի N 40-42 արձանագրային որոշումը. «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգին և միջոցառումների

ժամանակացույցին հավանություն տալու մասին», ժամանակավրեպ է և հնացած, դրանում նախատեսված միջոցառումների մեծ մասը չի կատարվել և դրանց կատարման ժամկետները սպառվել են

- Ներկա ՀԿ գործունեությունը կարգավորող օրենսդրությունը խնդրահարույց է՝
  - «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում նախատեսված իրավանորմերը՝ ՀԿ անդամների ու շահառուների շահերը դատարանում պաշտպանելու առումով տարընթերցումների տեղիք է տալիս, ինչը ՀՀ բոլոր դատարաններում շահարկում են ի վնաս ՀՀ քաղաքացիների ու ՀԿ-ների
  - «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում ՀԿ-ների կողմից հանրային շահը դատարանում պաշտպանելու հնարավորությունը սահմանափակված է բնապահպանական ոլորտով: Ընդ որում, այդ նորմի իրականացումը նույնպես օրենքով դժվարեցված է բազմաթիվ բյուրոկրատական կարգավորումներով, ինչը նույնպես բազմիցս շահարկում են դատական մարմինները
  - «Կամավորության մասին» ՀՀ օրենքի շրջանառվող նախագիծը պարունակում է ՀԿ-ների ու կամավորների ազատ գործունեությունը սահմանափակող բազմաթիվ դրույթներ և անհարկի վերահսկման իրավանորմեր
- Պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մեծամասամբ քամահրական վերաբերմունք կա ՔՀԿ-ների հանդեպ՝
  - Նախարարներին կից հասարակական խորհուրդների գործունեությունը մեծամասամբ ձևական է
  - ՔՀԿ-ների կողմից ներկայացրած դիմումները և վարչական բողոքները հիմնականում պատշաճ արձագանք չեն ստանում, դրանց տրվում են «ցրողական» բնույթի պատասխաններ
  - Պատշաճ չի աշխատում առցանց e-draft գործիքը
  - Պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինները պռոակտիվ չեն հանրային քննարկումներին հետաքրքրված ՀԿ-ների ներգրավման առումով
  - Պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինները ՔՀԿ-ներին որպես որակյալ գործընկեր չեն դիտում
  - Բոլորովին արդյունավետ չի գործում Հանրային խորհուրդը. նա դարձել էր նախորդ իշխանությունների կողմից վարվող ազգադավ քաղաքականության հանրային դակողը և ոչ թե նրա կառուցողական ու իրական ընդդիմախոսը: Այդ կառույցը իր գործունեության ողջ ընթացքում երբևէ չի արտահայտել հասարակության հիմնախնդիրները և չի պաշտպանել դրա շահերը, ինչը սահմանված է նաև դրա մասին օրենքով:
- ՔՀԿ-ները չեն մասնակցում դոնորների կողմից պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվող վարկային ու դրամաշնորհային ծրագրերի պլանավորմանը և վերահսկմանը

- ՀԿ-ների զգալի մասը կարիք ունի զարգացնելու իրենց կարողությունները, ներքին ռեսուրսները, ֆինանսական կայունության մակարդակը

Առաջարկներ

- Մշակել ՔՀԿ-Պետություն համագործակցության նոր ռազմավարություն՝ ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագրի նպատակների և հանձառությունների շրջանակներում
- «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում կատարել լրացումներ և փոփոխություններ՝ ՀԿ-ների կողմից իրենց անդամների, շահառուների և հանրային շահի դատական պաշտպանության իրավունքի հստակեցման, ամրագրման և գործնական կիրառության ապահովման մասով
- Հիմնավորապես բարելավել «Կամավորության մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ արդեն իսկ կայացած հանրային լայն քննարկումների արդյունքներով
- Նախարարներին կից հասարակական խորհուրդների մասին կառավարության որոշման հիմնովին ու արմատական փոփոխություն՝ այդ խորհուրդների դերի բարձրացման ու ոլորտում իրականացվող քաղաքականության վրա ազդեցության բարձրացման ուղղությամբ
- ՀԿ-ների կողմից ներկայացվող դիմումների ու վարչական բողոքները պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատշաճ ու պարտադիր վարչական վարույթ իրականացնելու կարգի սահմանում՝ «Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում, ՏԻՄ օրենսդրությունում և «Պետական կառավարման մարմինների կանոնադրությունների մասին» ՀՀ կառավարության որոշումներում
- e-draft առցանց գործիքի կառավարման բարելավում՝ քննարկման ժամկետների, հետադարձ կապի և այլն առումով
- Ոլորտային շահագրգիռ կողմերի կոնտակտային տվյալների բազայի ստեղծում և կանոնավոր օգտագործում պրոակտիվ հանրային քննարկումներ անցկացնելու և ՔՀԿ-ների հետ գործընկերային կապեր ստեղծելու և պահպանելու նպատակով
- Պետ բյուջեում նախատեսել Պետություն-ՔՀԿ համագործակցության հատուկ պետական ծրագիր, օրինակ՝ ՀԿ-ների կողմից կարողությունների զարգացման, մշտադիտարկման և այլ համագործակցային ծրագրեր իրագործելու նպատակով
- Նախատեսել պետության կողմից իր իրավասությունների մի մասի պատվիրակումը ՔՀԿ-ներին՝ մրցութային հիմունքով
- ՀԿ-ներին ներգրավել պետբյուջեով նախատեսված ծրագրերի արդյունքային, ոչ ֆինանսական ցուցանիշների մոնիթորինգին և վերահսկողությանը
- Վերանայել «Հանրային խորհրդի մասին» ՀՀ օրենքը՝ ժամանակի ոգուն համահունչ
- Նախատեսել իրավակարգավորումներ՝ ուղղված դոնորների վարկային և դրամաշնորհային միջոցներով իրականացվելիք ծրագրերի պորտֆելի ձևավորմանը,

դրանց մոնիթորինգին ու վերահսկողությանը ՔՀԿ-ների մասնակցության ապահովման ուղղությամբ
- ՀԿ կառավարման մասնագիտության ինստիտուցիոնալիզացիա՝ բակալավրիատ կամ մագիստրոսական կրթական ծրագրի ներդրման միջոցով ՀՀ բուհերից մեկում
- ՀԿ-ների իմիջի և ֆինանսական կայունության բարելավման միջոց՝ 1%-ի հարկի և դրա կիրառման մեխանիզմների ներդրում ՀՀ-ում

Խումբ 12. Ցանցապետություն

(խումբը ձևավորվեց Գլոբալ Հայաստան-Արտաքին հարաբերություններ խմբերի միավորման արդյունքում)

Դրական կողմեր

- Հեղափոխությունից հետո ստեղծվել է նոր իրավիճակ, որը հնարավորություն է տալիս համակարգային փոփոխություններ իրականացնել ցանկացած ոլորտում
- Հեղափոխական իրավիճակը առաջ է բերել «ստեղծագործ արկածախնդրություն», որը հնարավորություն է տալիս նախաձեռնել ծրագրեր և գործողություններ, որոնք նախկինում հնարավոր չէր լինի ոչ միայն իրականացնել, այլ նաև պատկերացնել
- Հայաստանում առկա են որոշ հաջողված գլոբալ նախաձեռնություններ՝ Թումո, Ավրորա
- Նոր իրավիճակը ստեղծել է քաղաքացիական կրթության համար բարենպաստ միջավայր
- Հեղափոխության տեսակի և որակի շնորհիվ Հայաստանը գրավել է աշխարհի ուշադրությունը
- Նոր իրավիճակը ստեղծել է արժեքային վերաիմաստավորման և ֆրագմենտարության վերացման հնարավորություն
- Քաղաքացիական հասարակությունը կարևոր դերակատարություն է ունեցել հեղափոխական գործընթացներում և կարող է ունենալ կարևոր դերակատարություն նաև հետհեղափոխական իրողության մեջ:

Բացասական կողմեր

- Հայաստանյան հասարակությունում դեռ առկա է աշխարհի՝ իր գործող անձանցով և հարաբերություններով բավականին հնացած նկարագիր
- Այդ նկարագրի անհամապատասխանությունը տեղի ունեցող գործընթացներին, ինչպես նաև գիտելիքի և տեղեկատվության պակասը հանգեցնում են կարծրատիպային և միֆականացված վախերի, որոնք խանգարում են ադեկվատ որոշումների կայացմանը
- Ընդհանուր առմամբ քաղաքացիական հասարակությունը արտաքին հարաբերություններում արդյունավետ և ակտիվ հանդես գալու համար ունի գիտելիքի և հմտությունների պակաս

- Հայաստանում իր պատմության վերջին շուրջ 30 տարվա ընթացքում դիտարկվում է որոշակի արժեքային ֆրագմենտարություն, ինչը հաճախ խոչընդոտում է կայուն սոցիալական միավորումների ստեղծմանը
- Վերջին տասնամյակում քաղաքացիական հասարակության մասին հասարակության լայն շրջանի ընկալումները խիստ աղավաղված են ոչ արդյունավետ հաղորդակցության և հակաքարոզչության պատճառով

Առաջարկներ

- Հեղափոխության արդյունքում տեղի է ունեցել արտաքին հարաբերությունների հիմքում ձևակերպվող արժեքների հստակեցում: Այն է՝
  - Սուվերենություն
  - Մարդակենտրոնություն
  - Արտաքին հարաբերությունների առաջնահերթությունները պայմանավորել ներքին առաջնահերթություններով
  - «Ամբիցիոզ» արտաքին քաղաքականության հնարավորություն, որը թույլ է տալիս Հայաստանին հանդես գալ ոչ թե աշխարհից ինչ որ բան անընդհատ «ուզողի», այլ «ներդրողի» դիրքերից
  - Անհրաժեշտ է իրականացնել նոր աշխարհի կամ աշխարհի նոր նկարագրություն, որի նպատակն է ի թիվս այլոց հստակեցնել Հայաստանի տեղը, հնարավորությունները և դերը ժամանակակից աշխարում
  - Նշված նկարագրությունների համար անրաժեշտ գործողություններից մեկը ճանաչողական այցերի իրականացումն է և նոր կապերի ստեղծումը
  - Նկարագրությունները պետք է պարբերաբար ձևակերպվեն, քննարկվեն և թարմացվեն: Այստեղ խոսքը հիմնականում աշխարհում տեղի ունեցող առանցքային գործընթացների և զարգացման միտումների վերլուծության և քննարկման մասին է
  - Նկարագրությունների բլոկն իր մեջ է ներառում նաև նոր պրոյեկտային հնարավորությունների որոնումը, որը համատեղ գործունեության միջոցով ճանաչողության հնարավորություն կտա
  - Կարևոր տեղեկատվական խողովակ են հայկական համայնքները, որոնք կարող են շատ կարևոր դեր խաղալ նկարագրման գործընթացում
- Նկարագրության գործընթացը բնական կերպով դրդում է նախաձեռնել գործունեություն, որի նպատակն է օգտվել բացահայտված հնարավորություններից և հնարավորինս արդյունավետ ինտեգրվել աշխարհին: Այս գործընթացն ընկալվում է որպես պրոյեկտային գործունեություն և իր մեջ է ներառում՝
  - Առկա գլոբալ պրոյեկտների հզորացում
  - Եղած պրոյեկտների գլոբալացում
  - Աշխարհում գոյություն ունեցող պրոյեկտների լոկալացում Հայաստանում
  - Նոր գլոկալ պրոյեկտների ստեղծում

- Հայաստանի արտաքին քաղաքականության ոլորտում արդյունավետ գործելու համար ֆոբիաների քանդումը և ամբիցիաների ձևակերպումը նույնպես դիտարկվում է որպես կարևոր գործողության տեսակ։
  - 3 միլիոն իզոլացված ազգից 10 միլիոն գլոբալացվող հասարակություն դառնալը
  - «Համահայկական» հասարակական ցանցեր (իրավապաշտպան, դիտորդական, հակակոռուպցիոն և այլն)
  - Սփյուռքի կառույցների «ապաավանդականացում»
  - Գործընկեր երկրներում հասարակական/հումանիտար գործունեության իրականացում
  - Երկրի մասին ապագայի տեսլականը ձևակերպել և օգտագործել որպես արտաքին քաղաքական նյութ

Գլոբալ Հայաստանի տեսանկյունից հայությանը կարելի է ընկալել որպես ցանց, որի կարևոր հանգույցներից է Հայաստանը որպես «տուն» կամ մաքսիմալ կոմֆորտի տիրույթ։ Այսինքն՝ Հայաստանում ցանցի ցանկացած անդամ իրեն զգում է առավելագույնս ապահով, հարմարավետ և անկաշկանդ։ Կենտրոն ունենալուց բացի Գլոբալ Հայաստան ցանցին անհրաժեշտ է նաև պայմանականորեն ասած «տեքստ», որը այն միավորող ու ընդհանուր արժեքների ու տեսլականի հիման վրա կառուցված բովնդակությունն է, որը շրջանառվում է ցանցով և ծառայում ցանցի բոլոր հանգույցներին։ Տեքստի կարևորությունը նաև նրանում է, որ այն կարող է արտադրվել ցանկացած հանգույցում։ Այս տեսանկյունից կարելի է ձևակերպել հետևյալ դրական կողմերը՝

- Հեղափոխությունից հետո առկա է ֆրագմենտար տեքստ, որի բաղկացուցիչները կառուցված են մի շարք կարևոր արժեքների վրա՝ սեր, համերաշխություն, արդարություն, և այլն
- Ստեղծված իրավիճակը հնարավորություն է տալիս ձևակերպել և նախաձեռնել գլոբալացման հայկական սցենարը

Բացասական կողմեր

- Ավանդաբար ձևակերպվում է որոշակի հակադրում Հայաստանի և Սփյուռքի միջև, մինչդեռ այդ բաղադրիչները համադրելի/հակադրելի չեն
- Տարիների ընթացքում հզորացվել են ուղղահայաց կապերը հօգուտ հորիզոնական կապերի

Ի՞նչ անել

- Ակտիվացնել ցանցի համար անհրաժեշտ տեքստերի ձևակերպումն ու տարածումը։ Դրանք պետք է ներառեն տեղեկություններ, ընդհանուր արժեքների և նպատակների

մասին ուղերձներ, և հնարավորություն տան հետադարձ կապի և դրանց միջոցով հնարավոր անելիքների ձևակերպման համար։

- Տեքստերը բացի ձևակերպվելուց պետք է նաև ադապտացվող լինեն ցանցի տարբեր հանգույցների համատեքստի համար։
  - Պետք է նախաձեռնել և իրականացնել առաջին հայկական արբանյակի արձակման նախագիծը
  - Տեքստերի և արբանյակի առկայությունը հնարավորություն կտա հնարավորինս արագ տիրաժավորել ցանցի և հայեցակարգի մասին կարևոր տեքստերն ու խորհրդանիշները
- ԵՊՀ ֆիլիալ ստեղծել կարևոր կենտրոններում։ Նույն միավորի տարբեր կառույցների առկայությունը հնարավորություն կտա հաղորդակցվող անոթների սկզբունքով ապահովել կարևոր բովնդակության շրջանառությունը
- Անհրաժեշտ է ստեղծել նեղ մսնագիտական ենթացանցեր, օրինակ՝ «իռացիոնալ մաթեմատիկոսների հայկական ակումբ»
- Անհրաժեշտ է ակտիվացնել թարգմանչական գործունեությունը հայերենից և հայերենի։
- Անհրաժեշտ է ստեղծել լեզվի ուսուցման նոր մեթոդներ՝ օգտագործելով ՏՏ հնարավորությունները, որոնք հնարավորություն կտան լատինատառ, կամ կյուրեղատառ հայերենի ուսուցում, ընթերցանություն և հաղորդակցություն կազմակերպել։

Նախագծեր

1. <u>Առաջին հայկական արբանյակի արձակում</u>

Արժեքները (սեր և համերաշխություն, սուվերենություն, մարդակենտրոնություն, Հայաստանի մրցակցային առավելություն) վերածել տեքստի, տեղափոխել տելեկոմունիկացիոն դաշտ, հեռարձակել։
Հասցեատեր (իրագործող)՝ կառավարություն
Արտադրող (կոնտենտ)՝ ՔՀ-ներ (Բուն TV, Civilnet, …)

2. Առկա գլոբալացվողները պրոյեկտներն են՝ Թումո, Ավրորա, Ոսկե Ծիրան, UWCD
3. Ցանցերը

Դիտորդ

- Դիտորդ/ «Ազգ – դիտորդ»
  - Քաղաքացի դիտորդ - Թրանսփարենսի Ինթերնեյշնլ + Ռեստարտ – «Ականատես»
- «Ազգ – իրավապաշտպան»
  - Փոքրամասնությունների իրավունք, - «Հայակական հելսինկյաններ»
    Իրագործող՝ AURORA, IDeA

- SOAD-ի նախաձեռնությամբ պարբերական ռոք փառատոն Հայաստանում, որի նպատակը կլինի կարևոր արժեքների տիրաժավորումը:
  - Իրականացնող՝ Մշակույթի նախարարություն, ՄԻՊ, ՔՀ
- «Վիրտուալ Համալսարան»
  - Իրականացնող՝ Կրթական ՀԿ-ներ, ԵՊՀ, ԲՈՒՆ, Ռեստարտ

Օգտագործել հետևյալ մեխանիզմը. դրսից ներս բերել հաջողակ պրոյեկտները, Հայաստանում հասնել հաջողության, հետո ներսից դուրս՝ ցանցին, իսկ այնուհետև ամբողջ աշխարհով տարածել (օրինակ՝ Restart-գլոկալացում)

4. «Ազգ-Հաբիթաթ»
   - Ցանցի տարբեր սուբյեկտների ներգրավմամբ «հաբիթաթի» սկզբունքներին բնորոշ ծրագրերի իրագործում

Այլ առաջարկություններ, որոնք ձևավորվեցին պլենար քննարկումներում

Կազմակերպել լրացուցիչ քննարկումներ հետևյալ ոլորտներում.

- ԵՄ-Հայաստան համագործակցության շրջանակներում ՀՀ ու արտասահմանյան ՔՀԿ-ների համագործակցության հիմնախնդիրներ: Քանի որ ԵՄ-Հայսատան համապարփակ ու ընդլայնված համագործակցության համաձայնագրի կարևոր նպատակներից ու մեր հանձնառություններից են Պետություն-ՔՀԿ-ներ և ՀՀ-ՔՀԿ-ներ ու ԵՄ-ՔՀԿ-ներ համագործակցության ընդլայնումը:

- Առողջապահություն. այս թեմայով քննարկում այս ձևաչափով հետագայում կկազմակերպվի համապատասխան առաքելություն ունեցող մասնագիտացված ՔՀԿ-ների հետ:

- Տնտեսություն. այս ոլորտի հիմախնդիրների վերաբերյալ պետք է հնարավորինս շուտ կազամակերպվի հատուկ առանձին քննարկում այս ձևաչափով:

- Սոցիալական ոլորտ. մասնակիորեն հնչեցին միայն ու միայն հաշմանդամություն ունեցող անձանց մի քանի ոչ նշանակալի խնդիրներ: Այս ոլորտի այլ հիմախնդիրների վերաբերյալ նույնպես պետք է կազամակերպվի հատուկ առանձին քննարկում այս ձևաչափով:

- Կրթություն - զինվորական ծառայություն կապերը, դրանց համակարգվածությունը՝ գիտության և պաշտպանության խնդիրների համաչափ զարգացման ենթատեքստում:

- Բոլոր խմբերի աշխատանքներում առկա էին **կառավարման ռեֆորմի** տարրեր, որոնք կարելի է առանձին քննարկել:

- Պետական գերատեսչություններին. ռազմավարություններ, քաղաքականություն մշակելու առաջին փուլից սկսել աշխատել ՔՀԿ–ների հետ՝ դրանք ավելի իրատեսական և կառավարելի ձևավորելու համար: Կիրառել կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ ստրատեգիաների մշակման մեթոդը:

- Կառավարման բարելավման ուղղությամբ ակտիվ ներգրավել ՔՀԿ-ներին պետական կառույցներում աշխատանքի մշակույթի, լիդերության, պրոյեկտային մտածելակերպի, բիզնես մոտեցումների ներմուծման ակնկալիքների, բազմաթիվ արժեհամակարգային բախումների և սերունդների աշխատառճի, մեթոդների, բախման հետևանքներն առավելագույնս մեղմելու նպատակով:

ՔՀ – պետական սեկտոր համագործակցություն

- Մարզային տեսչություններին կից ունենալ նաև ՔՀԿ հանձնաժողով
- ԱԱԾ–ն պատրաստ է թույլատրելի սահմաններում համագործակցել ՔՀԿ–ների հետ, օրինակ՝ նույն ֆորմատով հանդիպումներ կարելի է կազմակերպել (6 ամիսը մեկ)
- ԱԱԾ արխիվների թվայնացում է տեղի ունենում, որից հետո ՔՀԿ–ն հնարավորություն կունենա օգտվել դրա մի մասից
- Կարևոր է ՔՀԿ-ների դերը ԱԱԾ–ի նկատմամբ հասարակության կարծիքի ձևավորման գործընթացում
- ՔՀԿ-ները կարող են կրթական գործընթացներ իրականացնել հետևյալ ուղղություններով.
  - Թմրանյութերի խիստ տարածում; Ազգային ինքնության պահպանության հարց; հայրենասիրություն
- **Կուսակցություններ**
  - ստեղծել մի հարթակ մեդիայի ներկայացուցիչների և կուսակցությունների հետ՝ անձազերծման քաղաքականություն մշակել
  - Թեմատիկ քննարկումներ կազմակերպել լրագրողների հետ, որը կլուծի ապագաղափարականության խնդիրը
  - Կուսակցությունը պետք է ունենա ունիվերսալ, հստակ հայացքներ բոլոր ոլորտների հետ կապված
  - ՔՀԿ–ների կողմից առաջադրվեն հարցեր, որոնք կուսակցությունների միջոցով տեղափոխվեն կառավարություն
  - Կուսակցությունները լինեն ոչ թե անձի շուրջ հավաքված խմբեր, այլ որոշակի խնդիրների շուրջ հավաքված բաց հարթակներ
  - Կուսակցությունների **ֆինանսավորման** խնդիրը պիտի քննարկվի. որտեղի՞ց պիտի գա ֆինանսավորումը՝ պետությունի՞ց, թե՞ անհատներից

- Կուսակցությունների ֆինանսավորման հարցը կարող է լուծվել մրցութային դրամաշնորհների տրամադրմամբ

Ընդհանուր նկատառումներ

- Սա առաջին նմանատիպ միջոցառումն է, որի ընթացքում չի ձևակերպվել անվտանգության ու կոռուպցիայի խումբ ունենալու անհրաժեշտությունը, իսկ ընտրությունների խումբը այդպես էլ չի խոսել ընտրությունների մասին: Սա մի կողմից ցույց է տալիս, որ վստահության աճի պատճառով նախկին ձգվածությունն ու մշտական լարումը նվազել են, մյուս կողմից ցույց է տալիս, որ վերահսկողության մասով նվազման վտանգ կա ինչը այնքան էլ լավ չէ:
- Շատ հստակ զգացվում էր մեծամասնության, հատկապես կառավարության ներկայացուցիչների, հաղորդակցվելուն ու համագործակցելուն տրամադրված լինելը:
- Նախարարությունների ներկայացուցիչների ելույթները ցույց տվեցին, որ որոշ դեպքերում նոր իշխանությունների պլաններն ավելի լուրջ, կոնցեպտուալացված ու խորքային են քան կարելի էր ենթադրել, որոնք սակայն այնքան էլ լավ չեն հաղորդակցվել հանրությանը /Արթուր Գրիգորյան, Հովհաննես Հովհաննիսյան, Սարհատ Պետրոսյան/:
- Իշխանություններն ունեն կոնկրետ խնդիրներ լուծելու մոդելների և մասնագետների կարիք: Քանի որ մասնագետները միշտ չէ, որ համաձայն են աշխատել պետական սեկտորում ներգրավման այլ մեխանիզմների մշակման անհրաժեշտություն կա:
- ՔՀ կողմից ոլորտային խորհրդակցություններ նախաձեռնելը կարող է լինել այս միջոցառման հաջորդ քայլերից մեկը:
- Միչգերատեսչական կապերը դեռ նորմալ վիճակում չեն ու ՔՀԿ-ները կարող են այդ հարցում օգնել:
- Էլեկտրոնային կառավարման գործիքները ակտուալանում են նորովի, քանի որ ոչ թե դրսից պարտադրված տեղեկատվության այլ ներքին խնդիրներն արագ լուծելու, կամ տեսանելի դարձնելու համար են կիրառվելու:
- Երեք համագործակցության հնարավորություն մեկ միջոցառման ընթացքում գծագրվեց.
    - Գորիսի համայնքապետարանի համար կարողությունների զարգացման պատվեր
    - Միգրացիոն ծառայության հետ սոցիալական ձեռնարկության մոդելի կիրառումը, որը մտածվել էր ՀԱՄԱՏԵՂ-ով Գյումրու ինֆոտան համար
    - Ընդերքի կոմիտեի հետ պիլոտային էլէկտրոնային գործիք ստեղծել ՔՀԿ-ներին ներգրավելու պրոցեսն ավելի հեշտ ու ինստիտուցիոնալացված դարձնելու համար:

- Ավարտ –

10 հոկտեմբեր, 2018

Ծանուցում

Այս միջոցառումը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով, «ՀԿ Դեպո - Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագրի» շրջանակում:

Սույն զեկույցում ԵՀՀ-ն արտահայտում է միջոցառման մասնակիցների կողմից հնչեցրած կարծիքներն ու գաղափարները, խմբային քննարկումների արդյունքում ձևակերպված մտքերը: Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտահայտեն ԵՀՀ, ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: